ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1

ք. Երևան «26» 12 2017թ.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Աթենաս և Արես » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **988 600**/ ինը հարյուր ութսունութ հազար վեց հարյուր/ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը՝ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	«Աթենաս և Արես » ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	Ք.Սպիտակ Տեր -Սիմոնյան 22
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011018000	Հ/Հ 1570004484880200
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 06805306
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Գ. Հայրապետյան	Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N
«26» 12 2016թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1.	18811230/323	Կիսաճտքավոր կոշիկներ	Ռուսաստանի Դաշնություն	Տես հավելված 1.1	զույգ	8900	311500	35	Ք.Երևան Հալաբյան 48	35	2017թ. 4-րդ եռամսյակ
2.	18811240/305	Երկարաճիտք կոշիկ /**Հրշեջ-փրկարարի երկարաճիտ կոշիկներ/**	HARVIK Չինաստան	Տես հավելված 1.1	զույգ	35000	315000	9	Ք.Երևան Հալաբյան 48	9	2017թ. 4-րդ եռամսյակ
3.	35811180/310	Հատուկ հանդերձանք և պարագաներ **/Ամենօրյա համազգեստ /քողարկող/**	«Աթենաս և Արես » ՍՊԸ <<	Տես հավելված 1.1	լրակազմ	11500	345000	30	Ք.Երևան Հալաբյան 48	30	2017թ. 4-րդ եռամսյակ
4.	18231600/309	Սվիտերներ **/Շապիկ**	«Աթենաս և Արես » ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	1900	17100	9	Ք.Երևան Հալաբյան 48	9	2017թ. 4-րդ

		/մայկա/	ՀՀ								եռամսյակ

** Ծանոթություն – Ապրանքը պետք է լինի նախկինում չօգտագործված

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018000
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Աթենաս և Արես » ՍՊԸ
Ք.Սպիտակ Տեր –Սիմոնյան 22
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004484880200
ՀՎՀՀ 06805306
Տնօրեն՝

Կ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«28» 12 2017թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	18811230/323	Կիսաճտքավոր կոշիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	311500	311500
2.	18811240/305	Երկարաճիտք կոշիկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	315000	315000
3.	35811180/310	Հատուկ հանդերձանք և պարագաներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	345000	345000
4.	18231600/309	Սվիտերներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	17100	17100

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018000
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

_____ Գ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Աթենաս և Արես » ՍՊԸ
Ք.Սպիտակ Տեր -Սիմոնյան 22
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004484880200
ՀՎՀՀ 06805306
Տնօրեն՝

_____ Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«26» 12 2017թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«26» 12 2017թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 1.

«26» 12 2017թ. կնքված

N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/14-1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՉԱԲԱԲԱԺԻՆ 1

2. Կիսաճտքավոր կոշիկներ* (զույգ) - ГОСТ-19137-89: Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, տակացուից /տակացու և կրունկ/: Կոշկերեսի և հետնամասի կաշին պետք է լինի 1.8-ից 2.2մմ հաստության, իսկ լեզվակը և ճտքերը 1.2-ից 1.5մմ հաստության յուֆտե կաշվից, քթամասը և կրունկամասը կոշտ: Տակացուն և կրունկները՝ մաշվածադիմացկուն ռետինից /կաուչուկից/: Տակացուն ներսամասի ստելկային ամրացվում է արույրե մեխերով: Կոշիկն ունենում է երկու հիմնական կաշվե միջադիրներ: Կոշիկի ներսի հանովի-դնովի միջադիրը՝ ստելկան, 2.0մմ հաստության անտիսեպտիկ նյութից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Կոշիկը ճտքերի վրա պետք է ունենա դրոշմ, որի վրա պետք է նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Կոշիկը տակամասում պետք է ունենա դրոշմ՝ վրան նշված չափը:

***Չափսի սանդղակ**

Չափսը	38	39	40	41	42	43	44		Ընդամենը
զույգ	1	2	3	8	15	5	1		35

ՉԱԲԱԲԱԺԻՆ 2

Հրշեջ-փրկարարի երկարաճիտ կոշիկներ «Harvik» կամ համարժեք (զույգ)** - Կոշիկի երեսացուն կազմված է ռետինե և կտորե շերտերից, որը միանում է տակացուին սոսնգվելու և վուլկանացման եղանակով: Տակացուն և քթամասը ունեն պողպատե միջադիրներ /ստելկա/, որոնք ունեն անտիստատիկ պաշտպանվածություն էլեկտրական հոսանքից: Տակացուն մինչև 300°C-ի պայմաններում չի հալվում կամ ճաքճքում, իսկ 40 րոպե 250°C ջերմաստիճանով հարթության վրա չի ենթարկվում էական դեֆորմացիայի: 30 րոպե - 20°C ջերմաստիճանի պայմաններում տակացուի ջերմաստիճանը չի իջնում +10°C-ից: Տակացուի կրունկը սև գույնի, 100% բլորոպրենային մաշվածքադիմացկուն ռետինից: Ճիտքերի վերևի մասում ամրացված են ռետինե բռնակներ՝ հագնելու հարմարավետության համար: Ներսամասի վերին հատվածը – 250գ/մ2 խտությամբ և 0.6 մմ հաստությամբ բամբակյա գործվածք: Միջադիր ստելկան 140գ/մ² խտությամբ և 0.3 մմ հաստությամբ կտորե գործվածք:

Դիմացկունությունը նավթամթերքների ներգործությունից՝ -22°C-ի պայմաններում 22 ժամ իզոոկտանի մեջ մնալուց հետո ծավալի փոփոխություն առավելագույնը 12%:

Ռետինե կազմը՝ 65% բնական ռետին, 30% ստիրոլ-բութադիենային ռետին, 5% քլորապրենային ռետին:

Պողպատե քթամասը /EN 345/ ապահովում է մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն:

Չափսերը՝ 38 – 50: Քաշը 42 չափսի համար - 3,13կգ +/- 0.1 կգ:

Գույնը - սև՝ դեղին հատվածներով:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը:

****Չափսի սանդղակ**

Չափսը	40	41	42	43	44	Ընդամենը՝ 9 զույգ
Քանակը	1	1	3	3	1	

ՉԱԲԱԲԱԺԻՆ 3

1. **Ամենօրյա համազգեստ /քողարկող/ (լրակազմ)** - Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից, կեպիից:

Գործվածքի գունավորումն ըստ նկարի (նկարներ 1 և 6): Գործվածքի 1մ^2 մակերեսային խտությունը 210 ± 5գրամ/ մ^2, բաղադրությունը՝ 65% ± 2% պոլիէսթեր, 35% ± 2% բամբակ: Գործվածքի տեսակը «TWILL», պատկերը թվային, ներկման մեթոդը «Ռեակտիվ»: Արտադրությունից հետո պետք է մշակված լինի փափկացնող նյութով: 30^0 C ջերմաստիճանի ջրով 5 անգամ լվալուց հետո թույլատրելի նստումը հորիզոնական՝ 2%-ից ոչ ավելին, ուղղահայաց՝ 2%-ից ոչ ավելին: Ներկման եղանակը՝ indenthrene dyestuff: Ներկի ամրությունը՝

լվացում՝ 4-5 աստիճան, քրտինք՝ 4-5 աստիճան, արև՝ 5 աստիճան, չոր շփում՝ 4-5 աստիճան, թաց շփում՝ 3-4 աստիճան:

Բաճկոնը միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ 5 օղակ կոճակներով, որոնից վերևից առաջինը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ մյուս 4 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք, որի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով: Կրծքամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղակայված են կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա:

Կրծքամասի գրպանների լայնությունը 14 սմ, երկարությունը 16 սմ: Կրծքամասի վրադիր գրպանների կափույրների վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 13X2.5 սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 13X2.5 սմ չափով բաց շականակագույն/բեժ թելով ասեղնագործված «արյան կարգ»-ը տարբերանշանը **(նկար 4)**, իսկ աջ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, 13X2.5 սմ չափով բաց շականակագույն/բեժ թելով ասեղնագործված «MES OF ARMENIA» տարբերանշանը **(նկար 5)**: Կրծքամասի ձախ գրպանի կենտրոնում՝ ստորին եզրակարից 2սմ բարձրության վրա ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորխորդանշանը **(նկար 4)**:

Առաջամասի կողային վրադիր գրպանների լայնությունը 17,5 սմ, երկարությունը 20 սմ, կափույրի լայնությունը 6 սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3 սմ բարձրության վրա, ամրանում են 3X2.5 սմ չափի կպչուն ժապավեններով: Գոտկատեղում մշակված են, 4 սմ լայնությամբ ներկարված 2 ախլակներ՝ իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար: Ախլակները

կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով:

Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են ուղղանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են մեկ օղակով և երկու կոճակով: Աջ թևին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործված է ՓԾ թևքանշանը **(նկար 3)**, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև, ՀՀ եռագույնը կիսակլոր՝ ներքևում ասեղնագործված «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը **(նկար 2)**: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում բաց շականակագույնով/բեժ թելով 2.5X4 սմ չափսի տառատեսակով ասեղնագործված է «ԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» **(նկար 6)**: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում 2 կամրջակներ և 2 փակօղակներ: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 3 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է լինի դրոշմ՝ վրան նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: **Բաճկոնի վրա կատարվող բոլոր ասեղնագործումները կատարվում են խիտ գործվածքով և կցված նկարներին համապատասխան թելերի գունավորումներով:**

Տաբատը ուղիղ ձևվածքով, մշակված գոտիով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Առաջամասում՝ կողային թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ռետինե ժապավեններով: Կողքերից մշակված են կափույրով վրադիր գրպաններ: Կափույրներն ամրանում են 3X2.5 սմ չափի կպչուն ժապավեններով: Գրպանի լայնությունը 16,5 սմ, երկարությունը 20 սմ: Տաբատի ետևամասի աջ կողմում ներկարված է գրպան՝ 15սմ լայնությամբ:

Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծով, պատրաստված ջերմակայուն նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ սև:

Կեպին աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են սոսնձային կտորից միջադիրով: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է 2-3մմ հաստության պլաստմասե միջադիր: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է չափսը և արտադրող կազմակերպության անվանումը: Եզրից դեպի ներս 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը, սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8,2 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 54 չափսի գլխարկից պետք է լինի 8,8 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Գլխարկաբոլորքի դիմային ստորին հատվածով անցնում է 22մմ լայնությամբ կտորե հյուսվածք, իսկ կենտրոնում՝ <<ԱԻՆ>> խորդրդանշանը՝ խիտ ասեղնագործված: Չափսերը 54-ից 62՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող հայտի:

Համազգեստի արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափսերը 44/2 մինչև 64/6 չափս-հասակի՝ որոնք արյան կարգի համապատասխան քանակների հետ ներկայացվում են պատվիրատուի կողմից:

Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված.

Արտադրող կազմակերպության անվանումը. Չափս-հասակը. Լվացքի մեքենայով կամ ձեռքով լվանալուց ջրի ջերմաստիճանը մինչև 30°C:

Գունավոր հագուստի համար նախատեսված լվացող նյութերով:
Պարզաջրել մաքուր գոլ ջրով, չմզել, անհրաժեշտության դեպքում արդուկել ցածր ջերմաստիճանով:

Չ՝ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍՊԻՏԱԿԵՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ. ՊԻՏԱԿԸ Չ՝ՀԵՌԱՑՆԵԼ

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը: Չափսերի շեղումները համաձայն արտադրման տեխնիկական պայմանների:

Նկար N 1 **Նկար N 2** **Նկար N 3** **Նկար N 4** **Նկար N 5** **Նկար N 6**

ՀԱԲԱԲԱԺԻՆ 44. Շապիկ /մայկա/ (հատ) - Գործվածքը տրիկոտաժ, բաղադրությունը՝ 80% բամբակ, 20% արհեստական մանրաթելեր, մակերեսային խտությունը 160-170 գրամ: Արտաքին տեսքը՝ ուղղիղ ձևածքով, բաց շագանակագույն, կարճաթև, կլորավուն օձիքով՝ վզամասը մշակված տրիկոտաժե մանժետով: Ձախ թևին տպագրված է ՀՀ եռագույն դրոշը՝ կիսակլոր, մեջքի կենտրոնական մասում «ՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»: Մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափսերը՝ 3 հատ M,4 հատ L,2 հատ XL :

Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկը պիտակավորված՝ վրան նշված անվանումը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	«Աթենաս և Արես » ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	Ք.Սպիտակ Տեր -Սիմոնյան 22
ՀՀ ՊՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011018000	Հ/Հ 1570004484880200
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 06805306
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Գ. Հայրապետյան	Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ